

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՐՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Կեանքը հասանք է, իսկ երաժշտութիւնը ունի իր կեանքը, ուրեմն իր անցեալը, ներկան և ապագան: Կեանքը ընթանում է դէպի նորը: Երաժշտութիւնը ևս յետ չէ մնում: Չնայած վերջի դարերում իր արած առաջադիմութեան ահազին քայլերին, այս բողեին պահանջ է զգացւում մի նոր տարրի ներմուծման:

Ի՞նչ է դրա պատճառը: Միթէ զգացւում է, որ երաժշտութիւնը բաւականութիւն չէ տալիս ներկայ քաղաքակրթութեան, թէ՛ նրա նիւթերը այնքան սպառուել են, որ ոչինչ նոր չէ արտահանում այլևս, թէ՛ այն է պատճառը որ ձգտում կայ օտար տարր ուսումնասիրելու, կատարելագործելու և դրանով դարգացնելու մարդկութեան այն մասը, որ մինչև այսօր զուրկ է մնացել այս գեղարուեստի ճաշակից: Շատ հեղինակներից լսւում է, որ դժուարանում են այլևս նոր երկեր գրելու, որովհետև ինչքան էլ աշխատեն, պիտի առաջացնեն միևնոյն թեօրեօրեակիսան ձևերի (ֆորմաների) տակ միևնոյն դարձուածքները և եղանակների միևնոյն բարեփոխումները, որով 'սոյն' ևւրապահան կատարելագործուած երաժշտութեան պատկերն են դարձեալ երևալու հետաքրքրուող աշխարհին: Տրանջում են և՛ վիրտուօզները, և՛ սիրողները, որ նոր հեղինակութիւնների մէջ մի ստանձին շօշափելի նորութիւն չեն տեսնում, կարծես միշտ հների կրկնութիւնն է, որ կատարւում է: Հետեապէս հարկաւոր է մի նոր սարք երաժշտութեան մէջ:

Բացի դրանից, հեղինակի համար շատ հետաքրքիր է և նա չափազանց ոգևորւում է մի տարօրինակ, դեռ չը լսուած եղանակ ուսումնասիրելով: Այդպիսի տարօրինակ եղանակ, երաժշտութեան հակասիպ, այս բողեին ներկադացնում են ասիական բոլոր ազգերի երգերը: Դրանով մուգիկան բաժանւում է երկու գլխաւոր տարրերի—եւրոպականի, որ մշակուած է, և ասիականի, որ դեռ մնում է իբրև հում նիւթ: Երաժշտութիւնը, ինչպէս և գիտութիւնն ու արուեստը, ծագելով Ասիայում, անցնում և զարգանում է նախ Յունաստանում, յետոյ Իտալիայում և Սպա-

նիայում և ապա տարածւում Եւրոպայի միւս մասերում: Բայց նախ քան դարձեալ արեւելք հաստատ մուտք գործելը, նա պէտք է դեռ շարունակի նրանից ստացած մուզիկան կատարելագործել և նրա այժմեան եղանակները մշակել և ապա՝ արդէն եւրոպական ձևերին ընտելացած ասիացուն՝ առաջարկել նրա հարադատ երաժշտութիւնը մշակուած ձևով:

Ուրեմն եւրոպական երաժշտութեան մէջ ասիական տարրը հետզհետէ մանում է հետեւեալ պատճառներից դրդուած.

ա. Հեղինակներին հետաքրքրում է ասիական երգը, իբրև արեւելեան նոր եղանակներ.

բ. Երաժշտական գեղարուեստը հարստացնելու համար հարկաւոր են արեւելեան եղանակները, իբրև հում նիւթեր.

գ. Ասիացուն հարկաւոր է զարգացնել՝ մշակելով նրա երգերը և իրան տալով, և

դ. Ճանապարհների լաւ հաղորդակցութիւնը արեւելքի մէջ մտցնելով եւրոպական քաղաքակրթութիւնը, դիւրացնում է նաև արեւելեան երաժշտութեան մուտքը Եւրոպա:

Հետաքրքիր է որ Արեւելեան երաժշտական տարրը մտցնելու փորձերը եղել են դեռ սրանից 140—150 տարի առաջ, և շարունակուում են մինչև այսօր:

Մօգարսը՝ գերմանացի հանճարաւոր ստեղծագործ հեղինակը, որին վիեննացիք «Երաժշտութեան թագաւոր» անունը տուին, 1760-ական թուականներին իր «Clavierstücke» երկերի մէջ գրել է «à la Turca» պիեսը, որ մեծ համբաւ է ստացել այն ժամանակ, չը նայելով որ այնքան էլ զուտ ասիական ընաւորութիւն չունի: Նրանից յետոյ ասիական եղանակներ գրել և մշակել են հետեւեալ հեղինակները.

Օպերային գրուածքներում.

Վերդի՝ իտալացի տաղանդաւոր հեղինակը գրել է 26 հատ օպերա և այժմն էլ է գրում: Յոգնելով իր եւրոպական մուզիկայից՝ 1860-ական թուականներին ճանապարհորդում է Հընդկաստան, Եգիպտոս, Արաբիա և այլ տեղեր և վերադառնալով, այդ թարմ տպաւորութեան տակ գրում է իր՝ արտաքոյ կարգի վսեմ «Աիդա» օպերան, մտցնելով նրա մէջ արեւելեան եղանակներ: Նշանաւոր է երրորդ գործողութեան մէջ կատարելագործուած զուբնայի (oboe) կատարած solo դերը:

Հալեվի՝ հրէայ զգայուն և քնքոյ՜ հեղինակը իր «Հրէուհի» օպերայում շատ յարմար կերպով յօրինել և ներդաշնակել է մի գեղեցիկ արեւելեան եղանակ Ելիազարի «Դու իմ Ռաքէլ» արիայից առաջ նոյն օրօէ (զուբնա) գործիքի համար:

Րուբինոշիյն՝ ռուսաց վիթխարի երաժիշտ, հեղինակ, ման-

կազմած, պիանիստ-վիրտուոզ և Պետերբուրգի Ռուսաց կայսերական կոնսերվատորիայի հիմնադիրը, գրել է անհամար պիեսներ, երգեր, երկեր և օպերաներ: Ի միջի այլոց՝ «Թուրակ», «Մակաբայեցիք», «Ներոն» և «Դէմօն» օպերաները ունեն ասիական եղանակներ: Միայն թէ «Թուրակում», որ գրել է 17 տարեկան հասակում, բացի մի փոքր եղանակից, միւսները բոլորն էլ եւրոպական են, երեի նոր ուսման ազդեցութեան տակ:

Բօրոդին՝ ռուս ասիատէր երաժիշտ հեղինակ-նօվատօրը (նորութիւն մտցնող) ունեցել է իր ձեռքի տակ շատ հարուստ օպերային նիւթեր, բայց չի օգտուել նրանցից նրա համար, որ չէր կարելի այդ նիւթերով կազմած պիեսներում մտցնել ասիական տարր: Իրագործուել են նրա ցանկութիւնները, այն է՝ արևելեան եղանակներ բեմ դնել, իր գրած «Իգօր» օպերայով, որի երրորդ գործողութիւնը—Սանի ապարանքը ամբողջովին ասիական նիստ ու կաց է, զարդարուած արևելեան եղանակներով և ասիական պարերով:

Իպպօլիսով Իվանով՝ ռուս լուրջ հեղինակը իր «Ագրա» օպերայում շատ տեղերի տեւել է ասիական կօլորիտ: Աչքի են ընկնում լիրիկ-տենօր-պրիմօյի Solo ասիական երգերը, որոնցից զուտ արևելեան է մի արիա, որ ձշտութեամբ «Կանեցոց խրախոյս» հայոց երգն է:

Բայց այս բոլոր հեղինակներն էլ ասիական երաժշտութիւն մտցնելու գործում ծառայութիւն են մատուցել միմիայն իրանց ձգտումներով: Ինչ վերաբերում է եղանակների իսկականութեան, նրանք արևելեան ոգուն այնքան էլ մօտ չեն, որովհետև գրողները ասիացիներ չեն և չեն ապրել այն ժողովրդի մէջ, որի մասին գրել են:

Ուրիշ բան է «Լեպլեպլիճի Հօբ-Հօր Աղա» օպերայի հեղինակը:

Տիգրան Չուհանեան՝ պօլսեցի հայ անուանի երաժիշտ հեղինակը՝ Պարիզի կոնսերվատորիան աւարտելուց յետոյ 70-ական թուականներին Պօլսում մկսում է իր գործունէութիւնը մանկավարժութեամբ և հեղինակութեամբ: Նրա գրած չորս օպերաները և բազմաթիւ կամերային պիեսները հնչում են զուտ արևելական ոգով: Նա՛ լինելով ընդի ասիացի, իմանում էր մանկութիւնից միմիայն արևելեան երգ.—հայոց եկեղեցական և աշխարհական երգեր, և շատ տաճկերէն տաղեր ու խաղեր օսմանն ան եղանակներով: Նրա ստացած եւրոպական երաժշտական կրթութիւնը միջոց է եղել նրա համար իր ասիական եղանակները մշակելու և ներդաշնակելու: Նրա բոլոր գրուածքներով հիանում են արևելեան եղանակների ծարաւ եւրոպական լուրջ

երաժիշտները: Մեծ հետաքրքրութեամբ նուագուում են նրա սիւբիտները և սօնատները Պարիզի սալօններում: Իսկ օպերանները քանիցս ներկայացուել են Ֆրանսիական բեմի վրայ, որոնցից ամենահետաքրքրիւն է իր մելօդիաներով «Լեպլեպիճի Հօր-Հօր Աղա» օպերան, որի «Չմեռն անցաւ» և «Վանեցոց խրախոյս» երգերը տարածուել են և կովկասում: Կամերային մուզիկայից նշանաւոր են. «La lyre orientale», «Illusion fantastique», «Le Zéphire», «Mouvement perpétuel», «Mignon», «Une gavotte», «La gaité», «Cascade de Couz» և այլն իրանց զուտ արևելեան ճշտութեամբ: Այս բոլորը ունեն սօնատի, նօկախիւրհի և կապրիչի ձև, և նուագուում են կօնցերտներում:

Կամերային գրուածքներում.

Լիւս՝ գերմանացի ամենահռչակաւոր պիանիստ-վիրտուօզ և իմպրովիզատօր հեղինակը հնչեցնում է իր «Բապսօղիներում» ռենգարական երգերի արևելեան ճիւղերը:

Պաբլօ Սարազասի՝ առաջին ջութակահարը իր գրած բօշայական երգերը գրեթէ բոլորն էլ զարդարել է մերթ սպանական և մերթ արևելեան ոգով:

Գեհարիոս Ղորղանեան՝ հայ պիանիստ-վիրտուօզ իր «Բայաթիներով» հռչակ ստացաւ: Միրում են այդ «բայաթիները» ամեն տեղ, նրանք լի են կովկասեան և Երեսնի նահանգի եղանակներով, որոնք զուտ ասիական են:

Ն. Ս. Կլիմովսկի՝ ռուս թեօրեաիկ սիմֆօնիստ և արևելագէտը ունի մի շարք փորձեր և գրուած ասիական երկեր, որոնցից լոյս է տեսել «Կոռնկ» հայոց երգը:

Կօրեչեցնիկօ՝ մալօրոս նոր հեղինակը միշտ գրում է արևելեան սիւբիտներ և երգեր: Ունի տպած շատ գեղեցիկ ներդաշնակուած հայոց «Կոռնկ» երգը:

Նիկողայոս Տիգրանեան հայ երաժիշտ վիրտուօզ և հեղինակը քիչ ժամանակուայ մէջ լոյս ընծայեց մի շարք աշխատութիւններ մեծ ճշտութեամբ ներդաշնակուած զուտ կովկասեան և հայոց երգեր, պարեր և եղանակներ: Նշանաւոր են Պարսից բայաթիները՝ «Բայաթի-Քիւրդ», «Բայաթի-Շիրազ», «Շահնազ» և այլն ասիական բնաւորութեամբ:

Անդրեաս Քաղցածեան՝ խրիմցի հայ երաժիշտ օրգանիստը Սևաստօպօլի պատերազմի ժամանակ 1853—55 թուին ի պատիւ Նախիմովի ունի գրած «Սինօպօլի մարշ» և սրա նման եւրօպական պիեսներ: Բայց մշակել է և իրիմի եղանակներ (ասիական):

Յովհաննես Նալբանդեան՝ խրիմցի հայ յայտնի ջութակահար և ասիական եղանակների սիրահարը մշակել է մի քանի իրիմի եղանակներ շատ աջող կերպով:

Սպեցիալաբով՝ խորհրդի հայ թեօրեօտիկը շատ է սիրում գրել ասիական եղանակներ և ունի լոյս ընծայած մի քանի պիեսներ, ի միջի այլոց շատ զիւրեկան է նրա—«Խայթարման» (թաթարներին պար), միայն ափսոս որ հեղինակը  $\frac{1}{2}$ , տակտի փոխարէն գրել է  $\frac{3}{4}$ , տակտ, որ վնասում է հեղանակին և պարին:

Կարգարեսեյի՝ վրացի երգիչ և հեղինակը ուսուց կոնսերվատորիայից տպած ունի մի քանի բօմանսներ, որոնք ուշադրութեան արժանի են իրանց կամ կովկասեան եղանակների հարազատութեամբ:

Կճիճա՝ Վիեննայի կոնսերվատորիայից պիանիստ և հեղինակը բաւական հայոց երգեր ունի գրած պիանոյի համար, որ մշակել է ուրիշի երգածից:

Թաւենա՝ պօլսեցի հայ ձայնագրագէտ և մանկավարժը բոլոր իր գրածները հիմնել է միմիայն արևելեան եղանակների վրայ:

Եկեղեցական գրուածքներում.

Մ. Նկմալեան՝ հայ երաժիշտ թեօրեօտիկը գրել է հայոց եկեղեցու ամբողջ պատարագի արարողութիւնը իր պատշաճի երգերով ներդաշնակուած եռաձայն և քառաձայն խմբերի համար: Այս գործում բոլոր ասիական եղանակները պահուած են իրանց հարազատութեամբ և հնչում են զիւրեկան ներդաշնակութեամբ:

Վենետիկի Միսիթարեան ուխտը տպել է եկեղեցական երգեր և պատարագի արարողութիւնը: Արևելեան ոգին եղանակներում ճիշտ պահուած է, բայց որովհետև ներդաշնակողը՝ Բիանկինի, իտալացի է, քառաձայնը այնքան էլ լաւ չէ:

Վերոյիշեալ հեղինակների նման դեռ շատերը գրում են այժմ արևելեան մուզիկա և դեռ շատերն էլ գրելու են, որովհետև պահանջ կայ: Բայց դա դեռ չէ նշանակում, թէ ամեն մի թերուս երաժիշտ իրաւունք ունի վեր կենալ և երգեր հրատարակել, ինչպէս օրինակ՝ պ. Լ. Նիլազարեանը, կամ Դ. ք. Յովսէփեանը: Հարկաւոր է որ ասիացին գնայ Եւրոպա մուզիկա ուսանի, թեօրեօտիկ դառնայ և յետոյ, եթէ ձիրք ունի, գրի արևելեան եղանակներ եւրոպական երաժշտութեան ներդաշնակութեամբ: Այն ժամանակ միայն մինք մի փոքր ծառայութիւն մատուցած կը լինենք գործին:

Խ. ԿԱՐՍՍ-ՄՈՒՐՉԱ.